ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 21 կիրակի 8 յունիսի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստած մեծադիր ֆոտտո-գրաւիւր պատկերը, 2) *Մայրիկի անձրեւում*, մի շքեղ խրոմօ, 3) *Ոսկէ հղիաներում*, *կամ Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.



ՕՐԴՈՒՀԱՄ. Պարսկական մէղրէսէն ներսի կողմից.

ՍԱՓՈ

Պօեմա

‹Sappho de Mitilène, poétesse inspirée de l'amour; elle se serait précipité dans la mer du haut du rocher de Leucade, parceque le beau Phaon l'avait sédaigné...› *Histoire Grecque.*

I

Ինչպէս երազ մի գարնանի
Գիշերւան մեղմ, զովաշունչ,
Նըման երկրի իր Հայրենի
Մի դիցուհու ոգեշունչ,
Թեթեւաքայլ, ինչպէս վայրի
Լեռնային վիրձն սևաչեայ,
Իրանն նազիկ ու չինարի,
Ոգևորւած, հըրաչեայ—
Նա թափառում էր մոլորած
Անտառներումը թաքուն,
Արևասիւռ, համատարած
Դաշտերի մէջ կիսաքուն:
Ափին՝ զըւարթ ու մշտախոյս
Գետակների էր նստում,
Ափին ծովի մըրրկայոյզ
Մոլորաքայլ պըտտում:
Գա՝ նա էր, այն չքնաղ Սաֆոն,
Որին ժամին Հիացման
Տըւեց պարգև մեծն Ապոլոն՝
Անմահ քընար սքանչացման:
Եւ աւիւնըն ըզմայլանքի
Եռաց սրտում երգչուհուն
Եւ ջերմ եռանդը դուրգուրանքի
Տիրեց այդ նոր դիցուհուն:
Եւ նրա երգերը հոսեցին
Ներդաշնակ ու խանդալի,
Սիրոյ մասին նրանք խօսեցին
Մերթ բուռն ու խիստ և մերթ լի
Ձեշտերով մեղմ, տխրալի:
Եւ քընարը՝ նրան հընազանդ՝
Խառնում էր իր հառաչը—
Ասես սիրոյ քաղցրը աւանդ,
Ասես վերջին իր պաչը—
Մեղեդիի պէս ներդաշնակ
Հառաչի հետ զեփիւռի,
Որ հեծեծում էր ցաւունակ՝
Տերևներում թաւ ծառի
Եւ մեղմ սուլող եղէգներում,—
Հեծում էր և սահելով
Ծովի երեսն՝ այնտեղ մարում,
Սարսըռալով՝ ալիքներում
Իր գաղտնիքը պահելով:

II

Եւ նա ափին՝ այն մշտախոյս
Գետակների էր նստում,
Ափին ծովի մըրրկայոյզ
Մոլորաքայլ պըտտում:
Եւ նրա առջև տարածւում էր
Հելլադայի բընութիւնն,
Որ պայծառ ու ճոխ բացւում էր,
Իբր հըմայիչ թովչութիւն,
Արևի տակ մի ջերմակիծ,
Ասես մի վայր սրբօղած
Ոսկէ թոզով. վառ երկնքից
Այդ աւազովը մաղած:
Եւ սրփռոցն անհուն ծովի՝
Ընչի տակը փափուկ հովի՝
Դանդէլներովն իր փրփուրի
Ճոխ զարդարում էր ափերի
Կողերն անդորր, լռակեաց:
Մերթ մի ժայռ էր մենակեաց,
Մըռայլ, խորհող մի տեսքով
Կախած ջրի ջինջ երեսին:
Մերթ մի սար էր գոռ կրծքով,
Նըման յանդուգն մի հերոսին,
Ծովի ծոցը զալիս խըւում,
Մինչ իշխում էր կատարով
Եւ եզերքով երկայն վռւում՝
Իր դեղազարդ դալարով:
Մերթ վայրենի ուտումներով,
Աղմըկալի դոչումներով,
Փրփրելով ու սողալով,
Ջորամիջից դուրս էր վախչում
Յանկարծ գետակն, ծովը թռչում,
Արագ առաջ լողալով...
Բայց այդ բոլոր գեղեցկութիւնն
Ձէին գրաւում Սաֆոյին,
Համըր դիտում էր բընութիւնն,
Մտքերն ուրիշ տեղ էին:
Ընըրան թախիծն էր հալածում,
Սիրոյ հուրն էր բորբոքում,
Ճակատագիրն էր հարւածում
Եւ կսկիծը մորմոքում:

III

Եւ նա նստած ժայռի գլխին, —
Ծովը նինջով համակուած,—
Ձար Ամուրի սուր աղեղին
Թոյնովն սիրտը վարակուած,
Աստուածալին Թեթև մատով
Իր քընարին է զարնում.
Ձգացումն Թըռիչ է առնում:
Եւ ձայները բուռն կարօտով
Չեծեծում են, աղաչում,
Պաղատագին ու ջերմ եռանդով
Լալիս, լալիս, հառաչում:
Սէր ու երազ, յոյս ու վսեմագ,
Թախիծ ու ցաւ ու տանջանք,
Նախանձ, ցասում, յուզում, կըրակ,
Լաց, աղաչանք ու տենչանք—
Բոլորն եռում են ջերմասէս
Նրա ձայներում դիւթական,
Մերթ կենդան են, վըսեմ ու հեզ,
Մերթ քնքոյշ են, տրտմական,
Մերթ մեռնում են խոր հառաչով,
Նորից դողում հոգու ճիչով,
Մերթ խուլ ողբով հեկեկում,
Սրտապատառ փոթորկում,
Մերթ ցոսավառ մի Թըռիչով
Ոգևորւած՝ մըրրկում:
Եւ հերարձակ, չքնաղագէմ,
Աչքով անյոյս, տխրալից,
Նա սեղմում է իր կրծքի դէմ
Ոսկէ քընարն, ու նորից
Ձարկում մատով աստուածալին:
Եւ ձայները, մի երկնային
Ասես հոսանք ներդաշնակ,
Հոսում են մեղմ ալիքներով՝
Կախարդական մի նըւագ
Եւ իրանց ել և էջերով՝
Լցնում օդը բուլանդակ:
Եւ իբր առիւծ ունկնդիր,
Ջսպւած Թովիչ այն զելզելով,
Փըփրած բաշով, ուշագիր,
Իրար ետից գըլորւելով՝
Ալիքները ծովի սառ
Սահում, գալիս են դէպ ժայռ,
Նըրա կուրծքը ողջ ցօղելով,
Արտասուքով ողողելով,
Փաղաքշւելով անդադար:
Եւ քընարի հնչիւններին,
Սրտի սիրոյ կանչիւններին
Կարծես ականջ են միշտ դընում
Մեղմիկ նիրհող ծառերը,
Եւ մրտախոհ սարերը,
Եւ անտառն է հանդարտ մընում,
Եւ արձագանգ է ձորն հանում,
Եւ շուրջ ջրերն են Թըմրած,
Եւ այծեամն է վեր Թըռած,
Եւ մենակեաց ոստի տակ
Կորում է ձայնն իր սոխակ:

Ա. Լ.

(Կըշարունակի)

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Ֆիօրենտինիի

(Շարունակութիւն *)

XXXIV

Թէոդորային ներշնչած բարի զգացմունքը յանկարծ ոչնչացաւ: Նա ուզում էր տանջանքներին ենթարկել խեղճ մանուկին, բայց մի անյայտ ոյժ կարծես խանգարում էր նրան այդ սարսափելի հրամանը տալու: Ձարասիրտ, խստասահանջ բռնակալ կինը բարկանում էր, ամեն ջանք գործ էր դնում այդ Թոյլութեանը յաղթելու համար և ոչ մի կերպ չէր կարողանում: Իր կեանքում առաջին անգամ նա չըկարողացաւ կամքն ոյժով յաղթել այն, ինչ որ նրա կարծիքով, աննշելի Թոյլութիւն էր դէպի մի անյայտ երիտասարդ, որ համարձակւել էր հրապարակական վերաւորանք հասցնել նրան: Այդպէս անցաւ մի քանի օր: Մի անգամ առաւօտը նրան յայտնեցին, որ մի անյայտ օտարական ուզում է նրան ներկայանալ շատ կարևոր գործով: Թէոդորան հրամայեց ներս կանչել նրան: Օտարականը մտաւ: Դա մի ալեզարդ ծերունի էր, համեստ, բայց ազդու դէմքով: Ողջունելով Թէոդորային մինչև գետին և յայտնելով, որ իր անունն է Փիլիպպոս, ծերունին ասաց.

—Մեծ Թագուհի, համարձակւում եմ խնդրել քեզ Թոյլ տալ յայտնելու մի գործի հանգամանք, որի պատճառով ես վստահացայ ներկայանալ ձեզ:

Թոյլտուութիւն ստանալով Փիլիպպոսը՝ յայտնեց, որ ինքը եկել է հեռու տեղից, իր որդուն փրկելու նպատակով:

—Ո՞վ է քո որդին,— հարցրեց Թէոդորան:

—Ֆիովաննի Արաբոն, Թագուհի:

—Դու եկել ես փրկելու նրան: Ուրեմն նրան վտանգ է սպառնում:

*) Տես Տարազ № 20.

Ողողած ջրաղացը

Նկար Փ. Բրժովսկիի.

—Այնպիսի վտանգ, որից աւելին անկարելի է երևակայել. որդիս բարկացրել է քեզ, Թագուհի:

—Ասա ինձ, ինչ է նրա յանցանքը, ինչը դըրդեց նրան.

—Թագուհի, որդիս ազնիւ և քաջ երիտասարդ է, կուռում էր պարսիկների հետ ինչպէս հասակաւոր, նա ընդհանուր յարգանք և սէր էր վայելում: Բայց յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով նա թողեց բանակը և եկաւ Կոստանդնուպոլիս: Ես հետևեցի նրան և այստեղ միայն իմացայ, որ նա յանցանք է գործել, որի համար պէտք է պատասխանատու լինի իր կեանքով: Այդ անմիտը վիրաւորել է քո սրբազան անձնաւորութիւնը: Ես եկել եմ աղաչելու քեզ, որ մեծ Թագուհի, ներել երիտասարդին, թոյլ տալ ինձ դգելու նրան, որպէսզի ես կարողանամ հանգիստ մեռնել:

Այս ասելուց յետոյ, Ծերունին արտասուք թափելով նորից ընկաւ Թէոդորայի ոտների տակ:

—Ձո որդին,—անտարբերութեամբ պատասխանեց Թէոդորան,—վիրաւորել է կայսերական մեծութեանը: Դրա համար նա պէտք է պատասխանատու լինի իր կեանքով:

—Բայց դու, Թագուհի, կաղատես նրան, դու բարի և ողորմած ես:

—Բայց ինձանից աւելի մեծ իշխանութիւն կայ. դա օրէնքն է, ես ոչինչ չեմ կարող անել:

—Որդիս ոչ թէ մէկ, այլ հազար մահի է արժանի, այդ ես գիտեմ, բայց դու, մեծ Թագուհի, ողորմած եղիր և ներիր նրան:

—Կրկնում եմ, ես ոչինչ չեմ կարող անել: Որդիդ պէտք է մեռնի:

—Օ՜, Թագուհի, որքան խստասիրտ ես,—աղաղակեց Ծերունին ոտքի կանգնելով, սրտիդ մէջ խղճահարութիւն չկայ:

Թէոդորան հրամայեց, որպէսզի Փիլիպպոսը հեռանայ:

—Դարձեալ մի խօսք, Թագուհի,—ասաց Ծերունին,—և ես կըհեռանամ:

—Ասա, ինչ ես ուզում ասել:

—Այն, ինչ որ ես ցանկանում եմ հաղորդել քեզ, Թագուհի, մեծ գաղտնիք է, ես կարող եմ միմիայն քեզ յայտնել:

Թէոդորան նշան տւեց և սենեակում գտնւած պահակազօրքի սպաները դուրս գնացին:

—Թագուհի,—սկսեց Ծերունին,—ներեցէք, ես ձեզ ուղիղ չասացի, որ Ջիովաննին որդիս է: Ես ծառայ էի նրա Հօր մօտ, որ մեռնելով ինձ յանձնեց իր երեխային: Դաստիարակելով այս զեղեցիկ մանուկին, պահպանելով նրան, ես սիրեցի նրան ինչպէս հայր:

—Ո՞վ էր նրա Ծնողը:

—Օ՜, նրա Հանգուցեալ Հայրը հռչակաւոր տոհմից էր. նա Անաստասիոս կայսեր քրոջ որդին էր:

—Ի՞նչ էր նրա անունը:

—Խպպարքոս:

Այս ասելուց յետոյ Թէոդորան չըկարողացաւ զսպել իրան և յանկարծ աղաղակեց.

—Թէ ո՛վ էր նրա մայրը,—շարունակեց Փիլիպպոսը,—ձեզ կըպարզի ահա այս նամակը:

Ծերունին հանեց գրպանից մաքուր ծալած մի մագաղաթ և տւեց կայսրուհուն:

Դողդոջուն ձեռքերով Թէոդորան վերցրեց նամակը, բայց արեց և կարդաց Հետևեալը.

«Թէոդորա. երբ կարդաք այս տողերը, ես այլ ևս չեմ լինիլ աշխարհիս երեսին: Ես գրում եմ ձեզ մահւանս վերջին ժամին, երբ լռում են մարդկային կրքերը: Այդ ժամին ես վստահանում եմ խօսակցել ձեզ հետ, Թէոդորա, որպէս լաւագոյն բարեկամիս հետ, որի հետ ես երբեմն անցրել եմ բախտաւոր ժամեր: Թէպէտ այժմ դուք ամենահզօր կայսրուհին էք, բայց և այնպէս ես համարձակւում եմ դրել ձեզ, բայց նորից կրկնում եմ, այս ձայնն արդէն դերեզմանից է: Ես Թողնում եմ աշխարհիս երեսին մեր միակ Ջիովաննի որդուն. պաշտպանեցէք նրան, Թէոդորա, եթէ նա կարիք զգայ: Ես համոզւած եմ, որ մայրական սիրտը ձեզ մատնացոյց կանէ, Թէ ինչ պէտք է անել: Ես երբէք չեմ յայտնել որդուս, Թէ ո՛վ է եղել նրա մայրը, մինչև անգամ չեմ ասել նրա անունը. այդ Հանգամանքը գաղտնիք է մնացել Ջիովաննիի Համար: Ի՞նչ Հարկաւոր էր իմանալու խեղճ մանկանը, որ ինքը հզօր կայսրուհու տղան է: Բայց կարելի է նախատեսնել, Թէ ինչ կըպատահի որդի կեանքում: Կարելի է մեծ օգնութեան կարօտ լինի, չըմերժէք նրան, Թէոդորա: Ահա Թէ ինչու նախքան մեռնելս, Ջիովաննիի ծննդեան գաղտնիքը ես իմ ծառային և Հաւատարիմ բարեկամ Փիլիպպոսին եմ յայտնել, որ երեխային սիրում է նոյնպէս քընքոյշ, ինչպէս և ես: Ջիովաննիի վզին դուք կըզտնէք ոսկէ մանեակ, որ նւիրեցիք նրա ծննդեան օրը: Յուսով եմ, որ այս փոքրիկ նշանը կարող է Համոզել ձեզ, Թէոդորա, որ Ջիովաննին ձեր որդին է. եղէք ուրեմն նրա մայր, մի Թողնէք նրան առանց ձեր Հովանաւորութեան»:

Նամակը կարդալուց յետոյ Թէոդորան իջեցրեց գլուխը և մտածմունքի մէջ ընկաւ: Նրա մարմարենայ սրտում արթնացաւ մայրական զգացմունքը: Նա ուներ զեղեցիկ, ազնիւ, կատարեալ անձ-

նուրաց որդի, նա կարող էր հպարտանալ նրանով: Սակայն այս երեխան կարող էր ծառայել որպէս իր անկման վկայ, մտածեց փառասէր Թէոդորան: Յուստինիան կայսրը երբէք չէր կարող անտարբերութեամբ տանել այս բոլորը: Ապօրինի զաւակը կարող է առաջ բերել նրա ամուսնու՝ կայսեր բարկութիւնը և արհամարհանքը: Հակառակ մտքեր շփոթում էին Թէոդորային և ծերունի Փիլիպպոսը անհանգստութեամբ հետևում էր կայսրուհու դէմքի արտայայտութեանը: Քիչ ժամանակ լռութիւն էր թագաւորում, վերջապէս Թէոդորան բարձրացրեց գլուխը և աղաղակեց.

—Այժմ կարող ես գնալ, առ այժմ ես դեռ ոչինչ չեմ վճռում, վաղը արի՛ հէնց այս ժամանակ:

Ծերունին խորը ողջունեց և դուրս եկաւ: Թէոդորան խնդրեց Հրամայեց կանչել իր մօտ Ջիովաննիին: Մենակ մնալով նրա հետ, հարցրեց, թէ երբ նա ունի վզին ոսկէ մանեակ:

— Այո՛, թագուհի, ունեմ, ես աշխատում եմ թագցնել շապկիս տակ, որ չըկարողանան հեռացրքրել ամենքը: Ի սէր Աստուծոյ, մի զրկէք ինձ այդ վերջին մխիթարութիւնից: Այս գանձը ինձ համար մի յիշողութիւն է իմ թանգագին մօր մասին, որին ես երբէք չեմ տեսել:

—Հանդիստ եղիր, ես չեմ վերցնի մանեակը, միայն ուզում եմ տեսնել:

—Ահա այն, թագուհի,—պատասխանեց երիտասարդը, բաց անելով շապկի օձիքը:

Թէոդորան սկսեց ուշադրութեամբ զննել մանեակը, և համոզուեցաւ, որ հէնց այն մանեակն է, որ ինքը նւիրել էր իր որդուն, երբ նա ծնւեց: Մօր սիրտը քնքշաբար դողաց. նա ուզում էր գգւել այն հրաշալի մանուկին, որ այժմ կանգնած էր իր առաջ, ինչպէս մեղսագրեալ կալանաւոր, որը չի իմանում այն րոպէին թէ խօսում է իր հարազատ մօր հետ: Բայց կայսրուհու զգացմունքը խլացրեց այդ ձգտումը, Թէոդորան իրան յատուկ սառնասրտութեամբ հարցրեց.

—Այս մանեակը, դու ասում ես, իբրև յիշողութիւն է քո մօր մասին:

—Այո՛, թագուհի, այս սրբութիւնն է, որ մնայել է ինձ նրանից յետոյ:

—Նա մեռած է՞:

—Այո՛, մեռած է, վաղո՛ւց, երբ ես դեռ ծծի երեխայ էի:

—Դու չը գիտե՞ս նրա անունը:

—Նրան կոչում էին ինչպէս և ձեզ Թէոդորա:

—Իսկ քեզ ուրիշ ոչինչ չի յայտնի:

—Ոչինչ:

—Ասա՛ ինձ, դու սիրում ե՞ս մօրդ յիշել:

—Այո՛, թագուհի, Թէպէտ ես չեմ տեսել մօրս և հասկացողութիւն չունեմ նրա մասին, բայց նա որպէս մի սրբութիւն թագաւորում է իմ հոգու մէջ: Ինձ համար մայրս անմահ է, նա ինձ ներշնչում է ազնիւ վարմունքներ և վեհ զգացմունքներ:

—Է՛, իսկ եթէ նա կենդանի լինի՞:

—Աւա՛ղ, թագուհի, այդ բանը երևակայել անդամ անկարելի է: Նա մեռած է. հայրս իր սեփական ձեռքերով թաղեց նրան:

—Ո՞րտեղ:

—Արաբիայում, այնտեղ, ուր ես ծնւել եմ: Օ՛, ինչպէս դառն արտասուք էի թափում նրա գերեզմանի վրայ:

—Իսկ եթէ հայրդ քեզ խաբել է՞:

—Դա անկարելի է:

—Այժմ ես ուզում եմ իմ յիշատակ քո մօր՝ ներել և ազատութիւն տալ քեզ:

—Եւ դուք, թագուհի, այդպէս վեհանձն պէտք է լինի՞ք:

—Այո՛, բայց դու ինձանից չըպէտք է զոհ լինես, այլ մօրիցդ:

—Իսկ ի՞նչ կըլինի իմ բարեկամ Ֆացիոլին:

—Նրան պէտք է մոռանաս:

—Երբէ՞ք: Թողնել և մոռանալ իմ բարեկամին և ուսուցչին, իմ կողմից աններելի ստորութիւն կըլինէր:

—Ի՞նչ կարող ես նրա համար անել:

—Ես խնդրում եմ, թագուհի, ներումն շնորհել Ֆացիոլին այնպէս, ինչպէս և ինձ:

—Բայց դու խելագար ես, ինչպէս նկատում եմ—աղաղակեց Թէոդորան:

—Բայց, Աստուած իմ, ինչու ես չեմ կարող յուսալ ձեր վեհանձնութեան, ձեր գեղեցիկ սրտի վրայ: Եթէ յիշողութիւնը իմ խեղճ մօր մասին ձեր մէջ կարեկցութիւն արթնացրեց դէպի նրա որդին, որ ձեզ վիրաւորել էր, ինչու ուրեմն դուք չէք կարող ներել Ֆացիոլին, որն աւելի արժանի է, քան թէ ես: Ինձ յայտնի չէ Ֆացիոլի յանցանքը, բայց ես համոզուած եմ, որ նա իմ դործած յանցանքից մեծ չէ: Ներումն շնորհեցէ՛ք, թագուհի:

—Դա անկարելի է,—պատասխանեց սառն կերպով Թէոդորան, մտաբերելով Անտոնինային ուսած խոստումը, որով երբէք չըպէտք է ազատէր նրա որդուն:

—Ի՞նչով է նա մեղաւոր:

—Դա քեզ չէ վերաբերում: Յամենայն դէպս Ֆացիոլին ներել անկարելի է:

Սաֆոն

Ափիճ զարթ ու մեսախոյս գեսակնեերի էր նստում,
Ափիճ ծովի մրրկայոյզ՝ մոլորաթյլ պետում: (*Սաֆո, եր.* 338)

Մայրական բախտաւորութիւն — *Մաքսայի նկարներից*

—Ողբեմն, Թագուհի, ես էլ չեմ ընդունում ձեր ներումն, հրամայեցէք լինձ կախել: Եթէ Փացիոն պէտք է մեռնի, լինձ կեանք հարկաւոր չէ:

Այս խօսքերը արտասանելիս Ջիովաննին շատ դեղեցիկ էր: Նրա աչքերը փայլում էին, կուրծքը ուժգին բաբախում էր: Նա նման էր այն հրեշտակապետին, որին ներկայացրել է մեծ նկարչի վրձինը: Թէոդորան հիացել էր իր որդու սքանչելի դեղեցկութեան վրայ: Նա վախենում էր յաղթուած լինել: Այդ ակամայ կռիւն ոչնչացնելու համար, վառասէր կինը բացագանչեց.

—Դու առաջինն ես, Ջիովաննի, որ համարձակւում ես իմ կամքի դէմ գնալ: Դու կարող ես քո համարձակութեան համար պատասխանատու լինել արիւնով:

Այս ասելուց յետոյ, Թէոդորան կանչեց պահակազօրքի զինուորներին և հրամայեց տանել երիտասարդին բերդ: Սակայն Թէոդորան ակամայ մտածմունքի մէջ ընկաւ: Նրա սառցանման սիրտը հալւեց: Սքանչելի երիտասարդը նրա վրայ խոր տպաւորութիւն թողեց: Աստած իմ, մտածում էր նա, եթէ Ջիովաննին իմանար, որ նա կուրտիզան կնոջ որդին է, նա արհամարհանքով երեսը կըթեքէր իրանից: Բայց մի՛ևնոյն է, նա պէտք է ազատւի և բախտաւոր լինի: Ես հետից կը հոգամ նրա վիճակի մասին, ես կանեմ նրա համար ամեն ինչ, նրան բախտաւորացնելու համար: Ես կըպաշտպանեմ ամենայն վտանգից և կըտամ նրան աշխարհիս ամեն բարիքը: Բայց նա չըպէտք է իմանայ, որ ես նրա մայրն եմ: Սակայն ինչ անել Անտոնինային: Ես նրան խօսք տւի, որ Փացիոն երբէք չի դուրս գայ բանտից: Բայց ինչ կընշանակի չըկատարել այդ խոստումը համեմատած իմ թանգագին Ջիովաննիի բախտի հետ:

Այսպէս դատելուց, Թէոդորան մի միջոց գտաւ Փացիոյին և Ջիովաննիին փրկելու համար: Միւս օրը նա հրամայեց յանձնել երկու ձերբակալւածին ծերունի Փիլիպպոսին, որ պէտք է ճանապարհ էր դնել պալատի այդի միջից դէպի բոսֆոր, նստացնելով շոգենաւ և բարձրացնելով առագաստները: Ամեն բան կարգին էր: Երիտասարդ կալանաւորները կէս գիշերին նստեցին շոգենաւ, որը նրանց հեռացրեց Կոստանդնուպոլսից: Հետևեալ օրը Թէոդորան չափազանց հմտութեամբ խաղաց կոմեդիան: Նա վշտացած յայտնեց Անտոնինային, որ դժբախտութիւն է պատահել, որ գիշերը փախել են բանտից երկու յայտնի կալանաւոր՝ Փացիոն և Ջիովաննին: Որովհետև վերջինը մեղադրւում էր նորին մեծութեանը սպառնալի վիրաւորանք հասցնելու համար, ուստի Անտոնինան հաւատաց Թէոդորային, երբէք չ'ենթադրելով, որ Թէոդորան կարող էր օգնել իր թշնամուն փախչելու:

(Կըշարունակի)

ԱՐԱԶ

(Ժողովրդ. մոտիւներ)

Արազ, տակըդ մի՛ փորէ,
Առանց դրան ցա խոր է.
Արազ, փրցնտրածըս ինձ տո՛ւր,
Կամ թէ ասա ցա ո՞ւր է:
Ջիւան բալէս կըտրին էր,—
Տանը ցրստել կ'ամաչէր.—
Եկաւ որ աւցնի գրնայ—
Ճամիէն կըտրելն ամօթ չէ՞ր:
Արազ, արդեօք դու գիտե՞ս,
Որ անհոգի մի գես ես.
Նչխերդ փակ, կատաղի,
Մուրազով մարդ կըխեղդես:
Մութ ջրերիդ ծայերում
Բալիս ճայեացքն եմ տեսնում,
Որդեկորոյս մի մայր եմ,
Արազ, ցեզ եմ աւիծում:
Արազ, ցո ջուրը վարար,
Մի՛ տար ցաւերըս իրար,
Արազ, եթէ դու կարաս
Վերջին շունչըս բալիս տար...

Ա.ր. Նիկոյեանց

ՌԱՖՖԱՅԱԴՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ
ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ

ՄԵՆՔ ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴ

Կայսր եւ Ինքնակալ հառայն Ռուսիոյ

Ծայնեում ենք մեր յոյժ հպատակներին. այն մայիսի 29-ին Մեր Սահմանափրկի Սմուռնի Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնան ազատից յղութիւնից ծնելով Մեզ Դուստր, որ անուանեցաւ *Տատեանա:*

Մեր Կայսերական Տան այսպիսի անումն ընդունելով նոր ճեան Աստուածային բարեաց, որ բախած է Մեր եւ Մեր Կայսրութեան վրայ, ուսումն ենք այս ուրախալի եղելութեան մասին Մեր հաւատարիմ հպատակներին եւ նրանց հետ միասին ամբառնում ենք առ Սահմանարար Ձեռակն Մեր ջերմ աղօթքները, որպէս զի Նորածինը յաջողութեամբ աճէ եւ զարգանայ: Հրամայում ենք գրել եւ անուանել բոլոր գործերի մէջ ուր հարկն է, Մեր Դուստր Մեծ Իշխանուհի Տատեանա Նիկոլայեւնային Նորին Կայսերական Մեծութիւն:

Տրւած է Պետերհոֆում, մայիսի 29-ին Քրիստոսի ծննդեան հազար ութ հարիւր իննսուն հօթերորդ ամի, իսկ Մեր Թագաւորութեան երորդ տարին:

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռով ստորագրւած է. „ՆԻԿՈԼԱՅ"

ՆՈՐԻՆ ԿԱՅՍՐ. ՄԵԾՈՒԹԻՒՆ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅԻ ՀԵՌԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ ՏԱՃԿԱՅ ՍՈՒԼԹԱՆԻՆ

(Յոյն-տաճկական պատերազմը դադարեցնելու մասին)։

1897. 17 *Մայիսի, ՅՈՐԳՈՅՆ-ՍԷԼՕ.*

Ձեր Կայսերական Մեծութեան համար անսպասելի չըպիտի լինի երե մեր մէջ գոյութիւն ունեցող սրտակից բարեկամութեան եւ բարի դրացիութեան յարաբերութիւնները թելադրում են ինձ կոչուելն անել Ձեր ամենաբնեtիր զգացումներ եւ հաստատ յոյս ունենալ, որ Ձեր Մեծութիւնը չի յապաղիլ հերոսական պատերազմում իր բաջարի զօրի տարած յաղթութիւնը պսակելու կատարեալ հաւատարմութեամբ վերաբերելով դեպի այն իրաւունքները, որոնց իրանց գոյութիւնը յայտնի անելու համար միայն չչանակի պէս ժամերով պարապ ճառեր են ասելու, լանգարելով գործօն իրաւասուներին վարել իրանց ստանձնած պարտականութիւնները։

Ցանած երկպառակութեան սերմերը շատ շուտով հասունացած պտուղ կըտան քաղաքային խորհրդարանի անդաստանում, որ և անկասկած ասպարէզ կըգտնայ անձնական կրքերը յագեցնելուն։

Մենք կըցանկանայինք, որ նորընտիր քաղաքային իրաւասուները ջանային ցանած որոմները արմատախիլ անել իրանց միջից։ Անձնական հակառակութիւնները, եթէ անհնար լիներ իսպառ մոռանալու, գէթ ուրիշ տեղ որոշէին պարզելու, և քաղաքը կառավարէին առանց կանխակալ նախապաշարումների, որով ամենալաւ պատիժ կըլինէին հասցրած չար դիտումներով Թիֆլիսում սպաստարան գտնւած հրապարակախօսներին և ամաչեցրած մեր դարևոր եղբայրակից այն վրացիներին, որոնք այդքան կարճատեսութեամբ զոհ են գնում խարդաւանանքներին։

ՅՈՒԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ռուս լրագրութեան մի մասը *Հօց. Բր*-ի յոի ուղղութեան ստրուկ դարձած՝ անդիտակցաբար ընթանում է վնասակար ուղիով։

Ոմանց կարծիքով հայրենասիրութիւն է համարւում հայրենիքի բազմայեղ, բազմալեզու մանր ազգերին զրպարտութիւններով, հալածանքով ստիպելը, որ նրանք այնպէս մտածեն և ղեկավարուեն, ինչպէս օգտակար են կարծում այդ հրապարակախօսները։

Պարզ է, որ նրանց այդ ընթացքը խորին համոզմունքից չէ բղխած, այլ սոսկ շահագիտական նպատակները և փառասիրութեան ձգտումներն են դրանց իսկական պատճառները։

Հօց. Բր. իբրև տարածւած և իր տիրոջը մեծ եկամուտ բերող մի լրագիր, ունի աշխատակիցների և թղթակիցների մի այնպիսի շրջան, որոնք դեկավարւում են միմիայն այդ թերթի հրամանատարի միտումներով։ Եւ հայրենիքի բարօրութեան իբրև նախանձախնդիրներ, այդ կեղծ պատրւակով նրանք հասցնում են լայնատարած պետութեան շօշափելի վնասներ։

Վերագրւում են հաւատարիմ հպատակներին, խաղաղ ժողովրդին այնպիսի յանցանքներ, որ նրանց գոյութիւնն իսկ անհասկանալի է այդ ժողովրդին։

Օրերս Զուշուց Ադին ստորագրութեամբ մի թղթակցութիւն է տպագրել *Հօց. Բր.* լրագրում։ Մի կողմն ենք թողնում երևակայական, կատարեալ հնարովի փաստերի հերքելը։ Բայց ցանկանում ենք, որ *Հօց. Բր.* զբաղւի այդ քաղաքով և մանաւանդ այդ նահանգով, հետազօտէ և քննէ նրանց կենցաղը, դիտումները։ Ամազակութիւնը, կաշառքը, պետական պաշտօնների աճուրդով տալը մի կողմից, մլուս կողմից անտանելի ճանապարհների հաղորդակցութիւնը, բերրի նահանգի բնական հարստութիւնների անմշակ լինելը, նրանց արդիւնաբերութիւնը լքեալ վիճակի մէջ թողնելը՝ գործօն ժողովրդին առիթ են տւել այստեղից գաղթելու, թողնելով երկիրը իր ճակատագրին։

Ձշմարիտ հայրենասէրը, պետութեան շահերի պաշտպանը չիրաւի պէտք է ցաւի, որ սուրբ օրէնքների փոխարէն այստեղ տիրում է բռնակալութիւնը, անարդարութիւնը, երկիրը նիրհում է, անգործունէութիւնը մահացու հարւածէ տալիս մի ստւար ժողովրդի։

Զուշում երբէք չի կարող լինել ազգայնական հարց։ Այնտեղ հայերը և թուրքերը շատ հաշտ են և բարեկամ միմեանց։ Տարբերութիւնը միայն այն է, որ հայերի կողմն են կառավարութեան այն պաշտօնեաները, որոնք ներկա-

---

Ձեր Կայսերական Մեծութեան համար անսպասելի չըպիտի լինի երե մեր մէջ գոյութիւն ունեցող սրտակից բարեկամութեան եւ բարի դրացիութեան յարաբերութիւնները թելադրում են ինձ կոչուելն անել Ձեր ամենաբնեtիր զգացումներ եւ հաստատ յոյս ունենալ, որ Ձեր Մեծութիւնը չի յապաղիլ հերոսական պատերազմում իր բաջարի զօրի տարած յաղթութիւնը պսակելու կատարեալ հաւատարմութեամբ վերաբերելով դեպի այն իրաղաղասեր եւ չափաւորեցրած մտադրութիւնները, որոնց մասին Նորին Մեծութիւնը յայտարարեց պատերազմի ըսկզբում։

Յուսատանում զօրերի յառաջ խաղաղացումը դադարեցնելով եւ խաղաղութեան վերականգնման համար մեծ պետութիւնների միջամտութիւնը ընդունելով, Նորին Մեծութիւնը մի նոր իրաւունք կըստանայ վայելելու այն բարձր յարգանքը, որ շրջապատում է նրան եւ կատարած կըլինի մի իմաստուն գործ, որ ես միշտ կըյիշեի։

Խնդրում եմ Ձեր Կայսերական Մեծութիւնից հաւատալ իմ անդրդելի բարեկամութեան։

ՆԻԿՈԼԱՅ

Թիֆլ. հաղաք. իրաւասուների լրացուցիչ ընտրութիւնները

Այժմեան *Кавказъ* լրագրի և իր դաշնակից վրաց մամուլի մի մասի շնորհիւ առաջիկայ քառամեակի համար լրացուցիչ ընտրութիւններին անցան և այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ցաւալի հակապատկեր են նախորդ ընտրութեան։

Ուժեղ կուսակցութիւնը այս անգամ համարեա անտարբեր մնալով, չէր մասնակցել լրացուցիչ ընտրութիւններին։ Ընդդիմադիր կուսակցութիւնը միացած իր հետ բոլորովին հակառակ եռիասնարդների խմբակին՝ կոմպրոմիս արաւ և ուժեղ կուսակցութեանը նա խոնարհւելով՝ անցկացրաւ նախ այդ պարտիի ցանկացած մի քանի անձանց, որոնք առաջին ընտրութիւններին սեւացել էին և ապա ընտրեց իր մարդկանց։

Ոմանք իսկ այդ եռիասնարդական խմբակին պատկանողներից, հրաժարւեցին քւէարկել, թէև ամենայն վստահութեամբ նրանք էլ կանցնէին, անշուշտ չըկամենալով կոմպրոմիս անել դէնով և գործունէութեամբ ընդդիմադիր բոլորովին հակառակ պարտիի հետ։ Ոմներից այս անգամ էլ անցան բաւական թւով, 45%, հայեր 50%, իսկ վրացի 2%։

Թիֆլիսի ապագայ խորհրդարանը ներկայացնելու է իրանից մի խառնիճաղանճ ժողով։ Անշուշտ ընդդիմադիր կուսակցութեան չենւելու են նորընտիր մի շարք այն իրաւասուները, որոնք իրանց գոյութիւնը յայտնի անելու համար միայն չչանակի պէս ժամերով պարապ ճառեր են ասելու, լանգարելով գործօն իրաւասուներին վարել իրանց ստանձնած պարտականութիւնները։

Ցանած երկպառակութեան սերմերը շատ շուտով հասունացած պտուղ կըտան քաղաքային խորհրդարանի անդաստանում, որ և անկասկած ասպարէզ կըգտնայ անձնական կրքերը յագեցնելուն։

Մենք կըցանկանայինք, որ նորընտիր քաղաքային իրաւասուները ջանային ցանած որոմները արմատախիլ անել իրանց միջից։ Անձնական հակառակութիւնները, եթէ անհնար լիներ իսպառ մոռանալու, գէթ ուրիշ տեղ որոշէին պարզելու, և քաղաքը կառավարէին առանց կանխակալ նախապաշարումների, որով ամենալաւ պատիժ կըլինէին հասցրած չար դիտումներով Թիֆլիսում սպաստարան գտնւած հրապարակախօսներին և ամաչեցրած մեր դարևոր եղբայրակից այն վրացիներին, որոնք այդքան կարճատեսութեամբ զոհ են գնում խարդաւանանքներին։

ՅՈՒԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ռուս լրագրութեան մի մասը *Հօց. Բր*-ի յոի ուղղութեան ստրուկ դարձած՝ անդիտակցաբար ընթանում է վնասակար ուղիով։

Ոմանց կարծիքով հայրենասիրութիւն է համարւում հայրենիքի բազմայեղ, բազմալեզու մանր ազգերին զրպարտութիւններով, հալածանքով ստիպելը, որ նրանք այնպէս մտածեն և ղեկավարուեն, ինչպէս օգտակար են կարծում այդ հրապարակախօսները։

Պարզ է, որ նրանց այդ ընթացքը խորին համոզմունքից չէ բղխած, այլ սոսկ շահագիտական նպատակները և փառասիրութեան ձգտումներն են դրանց իսկական պատճառները։

Հօց. Բր. իբրև տարածւած և իր տիրոջը մեծ եկամուտ բերող մի լրագիր, ունի աշխատակիցների և թղթակիցների մի այնպիսի շրջան, որոնք դեկավարւում են միմիայն այդ թերթի հրամանատարի միտումներով։ Եւ հայրենիքի բարօրութեան իբրև նախանձախնդիրներ, այդ կեղծ պատրւակով նրանք հասցնում են լայնատարած պետութեան շօշափելի վնասներ։

Վերագրւում են հաւատարիմ հպատակներին, խաղաղ ժողովրդին այնպիսի յանցանքներ, որ նրանց գոյութիւնն իսկ անհասկանալի է այդ ժողովրդին։

Օրերս Զուշուց Ադին ստորագրութեամբ մի թղթակցութիւն է տպագրել *Հօց. Բր.* լրագրում։ Մի կողմն ենք թողնում երևակայական, կատարեալ հնարովի փաստերի հերքելը։ Բայց ցանկանում ենք, որ *Հօց. Բր.* զբաղւի այդ քաղաքով և մանաւանդ այդ նահանգով, հետազօտէ և քննէ նրանց կենցաղը, դիտումները։ Ամազակութիւնը, կաշառքը, պետական պաշտօնների աճուրդով տալը մի կողմից, մլուս կողմից անտանելի ճանապարհների հաղորդակցութիւնը, բերրի նահանգի բնական հարստութիւնների անմշակ լինելը, նրանց արդիւնաբերութիւնը լքեալ վիճակի մէջ թողնելը՝ գործօն ժողովրդին առիթ են տւել այստեղից գաղթելու, թողնելով երկիրը իր ճակատագրին։

Ձշմարիտ հայրենասէրը, պետութեան շահերի պաշտպանը չիրաւի պէտք է ցաւի, որ սուրբ օրէնքների փոխարէն այստեղ տիրում է բռնակալութիւնը, անարդարութիւնը, երկիրը նիրհում է, անգործունէութիւնը մահացու հարւածէ տալիս մի ստւար ժողովրդի։

Զուշում երբէք չի կարող լինել ազգայնական հարց։ Այնտեղ հայերը և թուրքերը շատ հաշտ են և բարեկամ միմեանց։ Տարբերութիւնը միայն այն է, որ հայերի կողմն են կառավարութեան այն պաշտօնեաները, որոնք ներկա-

յացուցիչ են արդարադատութեան եւ օրէնքի։ Թուրք բէգերի հովանաւորողները ադմինիստրացիայի ներկայացուցիչներն են եղել մինչև օրս։ Պետութեան այդ երկու միմեանցից տարբեր ներկայացուցիչների մէջ էլ պէտք է որոնել կառավարութեան շահերի և վնասների շարժառիթը ...

Դպրոցական

Ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան մէջ նորից խնդիր է դրւած մասնաւոր ուսումնարանների վրայ եղած հսկողութիւնն աւելի ընդարձակելու։ Նոյն իսկ մասնաւոր ուսումնարաններում աշակերտների բնութիւնը կառավարչական պատասխանատուների ներկայութեամբ կատարելու դիտաւորութիւն կայ։

—Քաղաքիս դպրոցներում բնութիւնները վերջացել են եւ մի քանիսում կատարել են հանդիսաւոր հաշտեւեցութիւն, ներկայութեամբ երկրիս իշխան կառավարչապետի եւ բարձրաստիճան անձանց։

—Ընտրեցի երկու ընկերութիւններ՝ ոսկէ մեդալով Թիֆլիզում օր. Ադելին Խանդամիրեան եւ Պետերբուրգում պարգեւով օր. Աննա Նազարեան՝ ատարել են իգական գիմնազիօնը ու մնում են, օր. Ադելին Խանդամիրեան Մոսկուայի կոնսերւատորիան, իսկ օր. Աննա Նազարեան բարձրագոյն նոր բացւող բժշկական ինստիտուտը։

—Թիֆ. իգական III գիմնազիօնը այս տարի ատարել են 20 օրիորդ, որոնցից 13 հայեր են՝ օր. օր. Մարգարիտ Աղաջանեան, Վառվառէ Ալլահվերդեան, Վառվառէ Արեւեան (ոսկէ մէդալով), Նունէ Ասլանծատրեան, Նատալիա Ղարաբէգեան, Մարիամ Նազարէթեան, Աննա Ներսիսեան, Եւգենիա Թօսիկեան, Աննա Թադէոսեան, Սուսաննակ Տէր-Վեւոնդեան, Ադելին Խանդամիրեան (ոսկէ մէդալով), Քրիստինէ Խանդամիրեան եւ Մարիամ Խուդաւերդեան։

—Կովկասեան երջանի հոգաբարձի հրամանով աշակերտներին արգելւում է Թիֆ. ժողովարանի այգին յաճախել։

—Դործարանների բանւորների որդոց ուսումը պարտադիր են կամենում անել եւ այս առիթով մի յանձնաժողով կայ լուսաւորութեան մինիստրութեան մէջ։

---

† Յ. Գ. Իւզբաշեանի կտակը

Մեր ազգի ամենամխիթարական երեւոյթներից մէկը նրա կտակասէր լինելու սովորութիւնն է։ Հայը, առաւել ևս հին, նահապետական հայը հազար մի տանջանքներով, խնայողութիւնով, իրան զրկանքների ենթարկելով փող է վաստակում և մի գեղեցիկ օր, նրա մահից յետոյ է իմացւում, թէ նրա խնայողութեամբ ձեռք բերած կարողութիւնը յատկացրւած է բարեգործական նպատակների։ Մենք իրաւունք չունենք ուրեմն այդպիսի հայերին մեղադրելու ժլատութեան, դծծիութեան մէջ, քանի որ դրանք իրանց սեպհական անձը զրկում են բարի նպատակների համար։ Պ. Յ. Խուդադեանցի նշանաւոր կտակից յետոյ (որի քննութիւնը և հաստատութիւնը տեղի ունեցաւ ամսիս 4-ին) այս տարի երկրորդ տեղն է բռնում ամսիս 29-ին Թիֆլիսում վախճանած Յ. Գ. Իւզբաշեանի կտակը։ Կտակի զօրութեամբ հանգուցեալի 50-60 հազար րուբլու կարողութիւնը (կանխիկ դրամով և կալւածներով) նւիրւում է Ներսիսեան դպրանոցին և բարեգործական նպատակների։

Իր կալւածների արդիւնքներից իր կնոջը տարեկան 1,200 ր. եւ եղբօրը՝ 2,000 ր. եւ իր աներձագ Գ. Կուկուջանեանցի երկու աղջիկներին՝ 3,000 ր., Կ. Է. Բաւեգ. Ընկերութեան՝ 500 ր., Թիֆ. Հրաս. Ընկերութեան՝ 500 ր., Հայուհ. ընկերութեան՝ 500 ր., Քաղաք. ապահովութեան գանձարանին՝ 500 ր., Թուրքի Փիլիմոն.—կարի գիւղատնտես. ուսումնարանին՝ 2,000 ր., Հայր Իսաո ա. Քահ. Կրոնաստասկուն բարեգործական պէտերբի՝ 200 ր., Թիֆ. Փիւ. ապաստարանին՝ 200 ր., Կոյրերի ուսումնարանին՝ 200., Ծխատեր գիւս. Քահ. Աղաճեանին՝ 200 ր. տալուց յետոյ, մնացած կարողութիւնը նւիրւում է Ներսիսեան դպրանոցին, պարտաւորացնելով հոգաբարձութեան պահել չքաւոր աշակերտներ իր անունով։

Նանդուցեալը այսպէս առատութեամբ նւիրատւութիւններ անելուց յետոյ կտակել է իրան թաղումը կատարել անշուք և համեստ, առանց արտաքին և աւելորդ ծէսերի, որ և ի կատար ածւեցաւ յունիսի 3-ին Վանաց Մայր եկեղեցում։

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐ

Գարունը գալով, արդէն սկսւեցին հեղեղումները աշխարհիս ամեն ծայրերում։ Հեռագիրները ամեն օր տեղեկութիւններ են հաղորդում բնութեան աներեւոյթ ոյժի գործած աւերմունքների մասին։ Ինչպես հաղորդեցինք «Տարագի» անցեալ №-ում, Բուլղարիայում եւ Սերբիայում հեղեղների վնասները անհագին են։ Ճանապարհները ողողել են ջրով, երկաթուղու գծերը քարուքանդ եղել։ Նոյնը պատահել է եւ Աւստրիա-Ունգարիայում։ Բուդապեշից հեռագրում են, որ Դունայ գետը բանդել է իր ափերը եւ 30,000 խոխա տարածութեամբ գետինը ծածկել է ջրով։ Նոյնպես եւ Իվանովա ու Ովչա —բոլոր նահանգը, որ գտնւում է Զեմլինի եւ Պանչովի մէջ, ողողւած է ջրով։ Վնասները սոսկալի են։ Կալկաթայում նոյնպես սաստիկ անձրեւներ են տեղացել եւ Անգլիական բազուկ յոբելեանի առթիւ տւելիք բանկետը յետաձգել է։ Տանկասանում էլ Պոլսի մօտ գտնւած Մուսատֆա-փաշա, Անդրոյէչ, Անոպոլ ողողւել են ջրով։ Երկաթուղային հաղորդակցութիւնը արտասահմանի հետ կտրւել է եւ փոստային հաղորդակցութիւնը Կոնստանցայի վրայով սպասւած եղան կանգնեցնել։ Հունձերը փչացել են եւ վնասը մեծ է։

Հեղեղները պակաս վնասներ չը-հասցրին եւ Անդրկովկասում. այսպես Արաքս գետը դուրս է եկել իր ափերից եւ այժմ Մուղանի դաշտը ծածկւել է ջրով. արդէն այնտեղ ինժեներներ են գնացել հնարքներ խորհելու, որ Արաքսի աւելի շատ վարարմանց ժամանակ վնասը մեծ չափեր չընդունի։ Նոյնը պատահեց եւ Թիֆլիսում անցեալ շաբաթ. յանկարծակի այնպիսի անձրեւ տեղաց, որ քաղաքիս փողոցներով գետեր հին վազում, շատ տներ ջրով լցւեցին, մի քանի շինութիւններ կործանւեցին։ Հեղեղը այնքան մեծ էր, որ մարդիկ, կառքեր փողոցով անցնելու ժամանակ ջուրը հասց, տարաւ եւ մօտ հատ մարդ խեղդեց կառքի ձիաների հետ։

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն

Արքունական թատրոնում ռուս դրամատիկ խմբի ներկայացումները առաջիկայ երեք շաբթի օրը կվերջանան։ Միւս սեզոնին նոր թատրոնում կունենանք օպերա, որ պ. Փորկատտին պէտք է պահէ։ Ազնւականների թատրոնը ձմեռւայ սեզոնի համար վերցրել է պ. Սադովսկու մալորոսների խումբը։ Փարիզայի եւ ընկ.անցեալ փորձը ապացուցեց, որ եթէ մի փոքր մատչելի լինին տեղերի գները, կարելի է Թիֆլիսում լաւ օպերա ունենալ, նոյն իսկ առանց կողմնակի օժանդակութեան։

Լիւդիգովի ընկ. ներկայացումները, չընայած որ յաճախ, թէև նոր, բայց անխմաստ պիէսներ էին խաղում ու շատ անդամ կիսով չափ դատարկ էր լինում, ընդհանուր առմամբ սպասածից աւելի յաջող ելք է ունեցել մուտքի կողմից։

Անցկացած շաբաթ ներկայացրած Նորդաուի Ձղրաներ պիէսը պէտք էր որ հետաքրքիր լիներ, ի նկատի ունենալով հեղինակի մեծ անունը և պիէսի վերնագիրը։ Սակայն դա մի սղոց կոմեդիա է համապատասխան այդ օրւայ բենեֆիցիանտի՝ պ. Պեսոցկու տեմպերամենտին։

Մարդ ապշում է և ինքն իրան հարցնում, թէ արդեօք այդ որ աշխարհում գոյութիւն ունի այժմ մի հասկացողութիւն, ուր կրթւած հանճարեղ գիտնական փաստաբանը ինքն իրան շղթայակապ է համարում նրա համար, որ իր մայրը խոհարարուհի է եղել, իսկ հայրը կառապան։ Ազնիւ, աշխատասէր մարդիկ են եղել նրա ծնողները ու ուսման օգուտը հասկանալով՝ իրանց միակ զաւակին գիտութեան կաճառն են գցել, որտեղից նա դուրս է եկել մի հանճարեղ իրաւաբան, բայց շղթայւած հասկացողութեամբ, թէ ինքը ստոր ծագումից է։

Ինչու հեղինակը իր պիէսը չէ անւանել usor, ուրացող և եսամոլ։ այդ աւելի ճիշտ կըլինէր ու ժամանակակից։ Անթիւ են նոյն իսկ ստոր ծագումով այնպիսի համալսարանականներ, որոնք կեանքի մէջ, մեռցրած իրանց խիղճն ու զգացումները, այնպիսի չանցանքներ են գործում, որ ոչ մի անկիրթ կօշկակար կամ կառապան դիտակցաբար իր խղճի վրայ չէր առնել։ Ժամանակակից ուսումնականը շատ է էգոյիստ, նիւթապաշտ և հաղիւ թէ նրա մտքով անցնելիս լինի այդ տեսակ մի ասպարիզի վրայ եղած ժամանակ իրան շղթայւած համարել, լոկ ծագումի շնորհիւ, որ երբէք այժմ խոչընդոտ չի լինում տաղանդին բարձրանալու, որքան կարող է նա։

Գնեդիչի *Разпром* կոմեդիան մի քանի պատկերներ են 1812 թ. ռուս-ֆրանսիական պատերազմի ժամանակ։ Մի բարձրաստիճան անձնաւորութիւն, Եկատերինեի օրերի փշրանք, իր նաժիշտներով, անզգայ կենցաղով և դրան հակապատկեր մի հայրենասէր մարդ՝ իր ընտանիքով։ Գնեդիչի այս կոմեդիան անյաջող ստեղծագործութիւն է, թէև նիւթը հետաքրքիր։ Գուցէ Ֆրանսիայում այժմ յաջողութիւն ունենայ այդ կոմեդիան, մանաւանդ եթէ սրա վերջը խաղան և մի վոդևիլ ռուս-ֆրանսիական բարեկամութիւնը նիւթ առած։ Այն ժամանակ պարզ կըլիներ, որ չըկայ ոչ յարատև թշնամութիւն և ոչ էլ բարեկամութիւն։ Ուրեմն, տ. Վոլգինայի բենեֆիսին խաղացին Դոդեի Սաֆօ կոմեդիան։

Այդ երեկոյ թատրոնում շատ ժողովուրդ կար և բենեֆեցիանտուհին ստացաւ ծափահարութիւններ ու ընծաներ։

—

Անցեալ երեքշաբթի պ. Վոյրը պոլսեցի մի քանի դաղթականների հետ ներկայացրեց Պարոնեանի Հադդասար աղբար կոմեդիան։ Սքանչելի էր ինքը Վոյրը և վատ չէին տաղանդաւոր պոլսեցիները, որոնք կարծէք բոլորն էլ բնական ձիրքով օժտւած լինին։

Ներկայացման վերջում տաղանդաւոր դաշնակահար պ. Տիգրանեան Նւագեց ասիական եղանակներ։

—

Օպերետային խումբը իր ներկայացումներն սկսել է նորից ամառային Էրմիտաժ թատրոնում։ Տ. Զոսնովսկայեա մնալու է առժամանակ այդ խմբի մէջ։

—

Ռուս դրամատիկ խմբի մի մասը պ. Ֆորկատտու թատրոնում Բորժոմումն է ներկայացումներ տալու, միւս մասը ցրւելու է մեր մի քանի կուրորտները։

——

ԼՈՒՐԵՐ

—

Մինչդեռ անգլիական պարլամէնտում անօգուտ հարցապնդումներ են տեղի ունենում Յովսէփ Յովնանի սպանութեան և Թոքատի կոտորածների չանցաւորների նկատմամբ, Ռուսիան էլ հանդիստ չէ. նա՝ Daily News-ի ասելով, պաշտպան է կանգնում Հայաստանի քրիստոնեաներին. Խարբերդի ռուսական հիւպատոսը գնացել է Ակն տեղեկութիւններ ժողովելու քաղաքի և շրջակայ գիւղերի ողբալի վիճակի մասին. որից յետոյ գնալու է և Հայաստանի ուրիշ տեղեր նոյնպէս հետազօտելու նպատակով։

—

Նոյն լրագրի ասելով Տաճկաստանը իր զինւորական ոյժերը խմբում է նաև Ռուսիայի սահմանագլխի վրայ, առաջ բերելով այն փաստը, որ Ռուսիան զինւորական մեծ ոյժ ունի Կարսի և Բայազէթի մօտ։

—

Թիֆլիսում միջնակարգ գիւղատնտեսական դպրոց հիմնելու մտադրութիւնը մօտենում է իր վախճանին. օրերս քաղաքագլխի պաշտօնակատարը ներկայացրեց Թիֆլիսի նահանգապետին ուսումն. յանձնաժողովի զեկուցումը այդ մասին։

—

«Бирж. Вѣд.» իր մի առաջնորդողում՝ Ռոսֆորի ափերի վրայ խորագրով ակնարկում է, որ պետութիւնների բանակցութիւնները յոյն-տաճկական գործերի մասին շատ կ'երկարաձգւեն և խառն ազգաբնակչութիւն ունեցող նահանգներում բէֆորմներ մտցնելու հարցը երկար ժամանակ կըքաշի...

—

Յունիսի 1-ին տեղի ունեցաւ քաղաքիս իրաւասուների լրացուցիչ ընտրութիւնը։ Ինչպէս երևում է, սա չըպիտի համարւի լրացուցիչ ընտրութիւն, որովհետև ընդամենը ընտրած են 29 իրաւասու, այն ինչ պէտք է ընտրւէին 30 իրաւասու և 16 փոխանորդ։ Առաջին ընտրութեան ժամանակ ընտրող վրացիների մեծամասնութիւնը հրաժարեց և այդպիսով քաղաքային վարչութիւնը պէտք է երրորդ ընտրութիւն նշանակէ իրաւա-

սուների օրինական թիւը լրացնելու համար։ Այս անգամ ընտրութիւններին մասնակցում էին 584 հոգի 588 ձայնով։

Ընտրւածներից 18 հոգի հայ են, 9-ը ռուս և 2-ը վրացի։ Երրորդ լրացուցիչ ընտրութիւնը երևի կընշանակուի այն ժամանակ, երբ պատշաճաւոր իշխանութիւնից կըստացուի նորընտիրների հաստատութիւնը։

—

Ենթ ուրախալի է Բէյտէրի գործակալութեան հաղորդածը, թէ սուլթանի իրադէով հրամայւած է հեռանալ Ադանայից Կիլիկիայի ինքնակոչ կաթողիկոս Յովհաննէս Գազանճեանին, որ ապօրինի կերպով բազմել էր Սսի կաթողիկոսական գահի վրայ, ապա ուրախալի չէ որ նոր ընտրութիւն պէտք է լինի կառավարութեան հրամանով Կիլիկիայի համար նոր կաթուղիկոս ընտրելու, քանի որ այդ պաշտօնի համար վաղուց ընտրւած է Սրբազան Գրիգորիոս Ալէաճեան։

—

Եւրոպական և յունական թերթերի ասելով, Դոմոկոսում տեղի ունեցած-ճակատամարտում յունական լեգիօնների մէջ եղել են 30 հայ կամաւորներ, որոնք իրանց հրամանատարի հետ ընկել են հերոսաբար պատերազմի դաշտում։

—

Լրագիրները հաղորդում են, որ իբր իշխանութիւնները Հայաստանում առաջարկել են քրդերին ժամանակաւորապէս տալու հայերին իրանց (!) գրաստները, կիսով վարուցանքս աններու։

Այս թշւառութիւնն ի նկատի ունենալով, չի կարելի չընախագուշակել, որ կոտորածների պակասը լրացնելու է սովը։ Եւ այսպէս հայերի առաջ կանգնած է սարսափելի սովը, որը կըսկսի հետզհետէ չնչել մնացած հայերին։

—

Յունիսի 1—3-ը տեղի ունեցան Թիֆ. նահանգի ազնւականների ժողովի նիստերը։ Այդ ժողովներում քննւեցան մի քանի հարցեր և ապա կատարւեց ազնւականների նահանգական պարագլխի ընտրութիւնը։ Յաւում ենք, որ մի շատ կարևոր հարց—գէմստուոյի հաստատութիւններ մտցնելու Թիֆլիսի նահանգում, որի ծրագիրը մշակել էր իշխան Գ. Թումանեան—քննութեան ենթարկւելով չետաձգւեց և նորից յանձնւեց մի յանձնաժողովի քննութեան։

Ազնւականների պարագլուխ նորից ընտրւեց իշխ. Կոստանդին Բագրատիօն—Մուխրանսկի 130 ձայնով ընդդէմ 57-ի։

—

Նորընտիր իրաւասու Ն. Յ. Թամամշեանը յուլիսի 4-ին տւել է գանգատ քաղաքային ընտրութիւնները անկանոն կատարելու մասին։ Գանգատուողի ասելով, ընտրութիւններին մասնակցել են 12 անձինք, որոնցից 8-ը պահում են գարեջատներ և 4-ն էլ գանւում են դատաստանական քննութեան տակ։ Սրանք օրէնքի համաձայն իրաւունք չունէին ընտրութիւններին մասնակցելու։

—

Անցեալ շաբաթ քաղաքումս հեղեղի ժամանակ, որին բացի մի քանի տեղացիների զոհ գնալուց, խեղդւել են և 19 գրադուն-զինւոր կառքի ձիաների հետ։ Մայիսի 31-ին գանւել են գրանցից 5-ի դիակը և թաղւել զինւորական գերեզմանատանը։ Թաղմանը ներկայ գրանւեցաւ Կովկասի պ. Կառավարչապետը։

—

Արգելւած է երկաթուղու կայարանների բուֆետներում զինւորական դպրոցների աշակերտներին ոգելից խմիչքներ վաճառել։

—

Սարիղամիշի մօտ այս տարի մեծ զօրահանդէս է լինելու։

—

Մոսկւան Պետերբուրգի հետ հեռախօսով միացնում է։ Մինչ ժամանակ չէ թիֆլիսից էլ հագու նոյնպէս հեռախօսի թել տանել։

—

Ներսիսեան դպրոցին պատկանող Սուրբ Գատսկի բազարում խանութները քանդւելու են և նորը կառուցւելու։ Շատ ցանկալի էր, որ գեղեցիկ արխիտեկտուրային շինութիւն բարձրանար այդտեղ։

—

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Ջանոլսկի հարց է բարձրացրել Կովկասում դպրոցական տուրմ մտցնելու։

—

Կրէտէի ինքնավարութիւնը

—

Տարազում մի քանի անգամ տպագրել ենք Կրետէի ինքնավարութեան ծրագիրը. ներկայ ինքնավարութիւնը, որ հաղորդեց նորերս Times, տարաւորում է միևչև այժմ յոյս տւածներից եւ առաջ են բերած եական կէտերը։

I. Իշխան.—Նա պէտք է քրիստոնեայ լինի և օտարազգի. կընորհեն մեծ պետութիւնները և կըհաստատի սուլթանը։ Նա կ'ունենայ veto-ի իրաւունք ազգային ժողովից ընդունւած բոլոր օրէնքների վերաբերութեամբ. նա կունենայ նաև ներումն շնորհելու իրաւունք և ինքը պէտք է նշանակի բոլոր պաշտօնեաներին, թէ քրիստոնեայ և թէ մահմեդական. այս և իրաւունք կունենայ գերագոյն հսկողութիւն անելու կղզու զինւորական ոյժի վրայ։

II. Ազգային ժողով։—Ազգային ժողովը կազմւում է քրիստոնեայ և մահմեդական պատգամաւորներից, այս կամ այն դաւանութեան սլատկանողների թիւի համաձայն։ Նա կըգումարւի երկու տարին մի անգամ, իսկ կարևոր դէպքերում արտակարգ։ Նախահաշիւը և բոլոր օրէնքները քննարկւում են ձայների պարզ առաւելութեամբ։

III. Փինանսներ։—Բոլոր ուղղակի և կողմնակի տուրքերը կըկենդրոնանան կղզու գանձարանում։ Ամեն տարի կըվճարւի սուլթանին 10,000 ֆունտ։ առաջին վճարումը 5 տարուց յետոյ տեղի կունենայ։

IV. Զօրք։ Տաճիկ զօրքեր չըպէտք է լինեն կղզու վրայ։ կարգը կըպահպանէ ժանդարմերիան, օտարազգի սպաների իշխանութեան տակ և օտարերկրեայ զօրախմբերի մասնակցութեամբ։ Երբ օտարերկրեայ զօրքերը հեռանան, տեղական մելիցիա պէտք է կազմել։

V. Լեզուն։ Կղզու վրայ պաշտօնական լեզուն յունականը կըլինի։ Սակայն բոլոր օրէնքները, հրովարտակները և պաշտօնական գեկուցումները պէտք է տպագրւեն նաև տաճկերէն։

VI. Դրօշակ։ Կղզին կունենայ իր սեպհական դրօշակը։

—

Խառն լուրեր

Մինչդեռ տաճիկները Թէսալիայում կատարեալ տիրութիւն են անում, Եւրոպական մեծ պետութիւնների դեսպանները հանգիստ սրտով շարունակում են բանակցութիւնները Պոլսում հաշտութեան պայմանների մասին։ Բանն այնտեղն է հասել, որ Պոլոսի նոր նշանակւած տաճիկ նահանգապետը հրամայ էր հանել փախած Թէսալացիների գոյքերը յուրքանչիւր գրաւելու դժւարութիւնը ընդհանուր է, գանգատւում են բանակցութիւնների ոչինչ հետևանքների չըհանելու համար, թէև

արդէն 4-րդ նիստն է տեղի ունեցել հաշտութեան պայմանների մասին։ Երբ Թէւֆիկ փաշան դեսպանների ժողովում կարդաց յիշատակագիրը, որ պարունակում էր տաճկաց պահանջները, անգլիական դեսպանը վճռական կերպով դիմադրեց Տաճկաստանի սահմանները մեծացնելու մտադրութեան։ Ֆրանսիական և իտալական դեսպանները նրա կարծիքը պաշտպանեցին, իսկ ռուսական դեսպանը յայտնեց, թէ Ռուսիան երբէ համաձայնութիւն կրտայ, որ Տաճկաստանը ստանայ Տէմոյեէ հովիտը (Թէսալիա), բայց այնպէս, որ Տուրնովոն անցնի Տաճկաստանին, իսկ Լարիսան մնայ Յունաստանին։

Իսկ Ռուս. գրաքակալութիւնը հաղորդում է, որ պետութիւնները միաձայն խորհուրդ են տալիս Ք. Պրանը չափաւոր լինել պահանջներում և հաստատում է, թէ վերջինս զրամադիր է ամենայնափաւոր որոշումն կայացնել։

Ո՞րին հաւատանք...

—Յունաստանում դեռ իրերի դրութիւնը չի փոխուել. թագաւորի և միևնոյն ժամանակ մնչ տարաձայնութիւններ են ծագել։ Թագաւորը խաղաղութիւն է ցանկանում, իսկ մինիստրները դէմ են պատերազմական տուգանք վճարելուն կամ հողերի մի մասը Տաճկաստանին զիջելուն։ Թագաւորը հրաժարուել է իր առաջից, պատերազմական տուգանքի վճարելը փոքր ի շատէ դիւրացնելու համար։

—Ներկայումս Յունաստանում գտնուում են 60,000 ընտանիք, որոնք փախել են Թէսալիայից և Էպիրոսից։ Նրանց կրած վնասը հասնում է 200 միլ. դրախմի և օրական 20,000 դրախմ ծախք է հարկաւոր նրանց գոյութիւնը պահելու համար։

—Հանից երևում է, որ Եւրոպական պետութիւնները մինչև այժմ Կրէտէի պաշարումը չեն վերցրել։ Վերջերս եւրոպական նաւատորմիղը բռնեց չորս յունական նաւեր, որոնք կրէտէ էին գնում։ Նրանցից մէկում գտնուում էին 25 յոյներ, որոնք բաւականչափ հրացաններ և ռազմամթերք ունէին։ Միւս նաւերի վրայ գտնուում էին Յունաստանից փախած կրէտացիներ, որոնց թոյլատրուեցաւ մտնել կղզին։ Ինակիչների տրամադրութիւնը այժմ փոխել է. ապստամբները և քրիստոնեայ ազգաբնակչութիւնը սկսում են համաձայնել ինքնավարութիւն մտցնելու գաղափարին։ Ինչպէս յայտնի է, կրէտացիք վճռել էին մինչև վերջին շունչը պատերազմել իրանց հայրենիքը Մայր-հայրենիքին միացնելու համար։

—Պարիզում յունիսի 1-ին մի սպանութեան փորձ տեղի ունեցաւ Ֆրանսիական հանրապետութեան նախագահի կեանքի դէմ։ Լոնշանի ձիարշաւի ճանապարհին Փ. Փորին մօտեցաւ երիտասարդ մարդ և մի բան արձակեց նրա վրայ. նախագահը չվնասուեց։ Հանից երևաց, որ ատրճանակից չի եղել արձակուած գնդակը, այլ ձգուած է մի չուգունէ խողովակ, լի վառօդով և ուրիշ նիւթերով։ Խողովակի մօտ գտել են Փորի պատիւը շօշափող մի գրութիւն, մի փողոնի հրացան և մի փոքրիկ դաշոյն, որի վրայ փորագրուած է մահուան սպառնալիք Փորին։ Գտնուել է նաև մի թուղթ, որի վրայ գրուած է եղել «Մահ Ֆէլիքս Փորին»։ Յանցաւորը կարողացաւ փախչել և մինչև այժմ չի ձերբակալուած։

Նամակ խմբագրին

Երևան, 30-ին մայիսի.

Մշակ յուգրի 10 եւ 11 համարներում երեւանից տպւեց մի նամակ պ. Տ. Յովհաննիսեանի ստորագրութեամբ, որով փաստերը յեղաշրջելով սխալ տեղեկութիւններ է հաղորդում Բարեգործական ընկ. Երեւանի վարչութեան մասին եւ անհանգստում է նրան։ Մենք որպես վարչութեան անդամներ մանրամասն բացատրութիւններով ուղարկեցինք **Մշակի** 19, 20, 23 25 համարներում վարչութեան վրայ բարդած այդ մեղադրանքները։ **Մշակի** 39, 40, 43, 45 ու 48 համարներում պ. Յովհաննիսեանի նորից հանդէս եկաւ մեր գրածի հերքման անհան տակ մի չափից դուրս ընդարձակ յօդուածով, տալով հարցին մասնաւոր նշանակութիւն, աւելի շատ յեղաշրջելով փաստերը եւ հասցնելով բէ վարչութեանը եւ բէ նրա անդամներին աւելի մեծ վիրաւորանքի։ Մենք այդ գրութիւնն էլ հերքեցինք, ուղարկելով **Մշակին** խմբագրութեանը դեռ մայսոյս 11-ին մի համեմատաբար փոքր նամակ (պ. Յովհաննիսեանի յօդուածի մեծութեամբ), սակայն **Մշակի** խմբագրութիւնը, 60 համարում, պատասխանից, բէ հերքման մեծութեան... պատճառով չի տպագրի, միևնոյն պատասխանում յայտնելով, որ մենք իրաւունք ունենք վերջին խօսքը ասելու։

Մշակի այդ վարմունքը համարելով անարդար եւ վիրաւորական, որով կարծես տրամադրում է ընդունել բէ խմբագրութիւնը պաշտպանութիւն է ցոյց տալիս մի հիմնարկութեան վրայ բարդած անարդար մեղադրանքների, եւ բէ դրանով միանգամայն պաշտպանած լինելով մի անհատի անփառս գրածները ընդդէմ մի հասարակական հիմնարկութեան պաշտօնական եւ փաստական գրութեան, մենք, ձգտարտութիւնը վերականգնելու համար, դիմում ենք մեր հիմնարկութեանը, մեծապատիւ խմբագիր, խնդրելով տեղ տալ **Մշակի** մօտակայ համարներից մէկում մեր այս հերքմանը, որ **Մշակի** խմբագրութիւնից չարժանացաւ մի փոքր անկիւն գրաւելու իր թերթում, միևչդեռ նա մեծ համբաւ բացեց մի մասնաւոր անհատի առաջ նոյն յուգրի հչերը անտեսման չափով։

Բարեգործական ընկերութեան Երևանի վարչութեան նախկին անդամներ՝

Յովիսիմէ Տէր-Մկրտչեանց. Գէորգ Ղարաջեանց. Տիգրան Տէր-Յակոբեանց. Սիրական Տէր-Մարտիրոսեանց. Սարգիս Աւետիսեան։

Մեր պատկերները

I

Ողղուած յուգրագը.
Նկար Փ. Բոժէզովսկիի.

Տարազի սոյն №-ում տպագրած նկարը ներկայացնում է Բուլղարիայում մի *ողղուած յուգրագ* հեղեղների ժամանակ։ Հեղեղը հետզհետէ շատանալով բանդել է յուգրագը, տարել աղօրիքները եւ միւս իրերը։

Նկարիչը, որ լեհացի Փ. Բոժէզովսկին է, մեծ նաճակով եւ տաղանդով գծել է քննութեան տեսարանը. խիստ բնական եւ տպաւորիչ են կատարի ամբերը եւ քանձր անտառը, որի մէջ է գտնւում *ողղուած յուգրագը*։

II

Մայրական բախտաւորութիւն.
Մալմայի նկարներից.

Սիւժէտը, որ վերցրել է նկարիչը իր նկարի համար, շատ հետաքրքրական է բարդ լինելուց, սակայն նա լի է ոգւով եւ ջերմութեամբ։ Մատաղ մայրը իր առջնեկ որդին ձեռքերի վրայ խաղացնելով, հրճւում է նրա բարի բնիկնեբով եւ ամաչկոտութեամբ լսում է, ո՞ւ, որքան երջանկութիւն, նրա առաջին բոթովաքերը...

Այլ եւ այլ

Փ ր կ ա ր ա ր թ ի կ ն ո ց

Մի հետաքրքրական նորութիւն տեղի ունեցաւ նորերս Բիլի գետի վրայ, խուռն հասարակութեան ներկայութեամբ։ Գերմանացի տեխնիկ Փ. Վ. Կուլ, գիրը ձեռքին, յողաց Բիլի վրայ կեօլնի մօտ, ցոյց տալու համար յուգրութեան ներկայացուցիչներին իր նոր գիւտի պիտանիութիւնը, փրկարար բիկնոցի միջոցով։ Փորձն աւելի քան մեծ յաջողութիւն ունեցաւ։ Ընդհանրապես փրկարար բիկնոցը չի զանազանւում սովորական փրկարար բիկնոցներից. միայն նրա կողքին գտնւած գրպանի մօտ երեւում է ոտեղնային մի խողովակ, որի օգնութեամբ բիկնոցը լցւում է օդով։ (Նա բաղկացած է կրկու մասերից)։ Թիկնոցի օդով լցնելը երկու րոպէից աւելի չի տեւում։ Հագնելով այդ բիկնոցը եւ ընկնելով յուգրի մէջ, հասարակաւոր մարդը մի քանի օր կարող է մնալ յուգրի երեսին։ Պ. Կուլի հաշւով յուգրի երեսին կարելի է մնալ 16—18 օր, եթէ մարդ հագնի այդ տեսակ անդրավարտիկ, բանկոնակ, կօշիկներ եւ այլն։ Բացի սրանից այդ բիկնոցը տարերւում է բոլոր այդ տեսակ գործիքներից իր գոյութեամբ։

Խմբագրութեան գրասենեակից.

—

Հասցէ փոխելու համար պէտք է 35 կ. մարկի ներ հաղորդել նիր հասցէն, կամ բանդէրոլի վրայ տպած հասցէն ուղարկել, հակառակ դէպքում պահանջը կըմնայ անկատար։

— —

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Սեբաստ. Պար. ընկ. Ճիւղի Ե. անդ.— Տպագրում ենք ձեր նամակը եւ *Տարազի* հետեւեալ №-ում կրգետեղենք ձեր պատասխանը, իր նկատի ունենալով, որ դուք չէք կամենում պատասխանատուիւն եւ հիւրընկալութիւն գտնել նոյ պանդոկում։ Մեր էջերը որքան որ սուղ լինին, այնու ամենայնիւ ճշմարտութիւնը վերականգնելու համար առաջադիմական կուսակցութեան համար մանաւանդ միշտ բաց են։

Բագու. Ս. Մ. Յանում ենք, որ Ձեր խնդիրը չենք կարող կատարել։

Լանգոն. Ալ. Հ. Վիկտորիա քագուհու յոբելեանի տօնախմբութեան առիթով սպասում ենք Ձեր Ճեիեհոնեներին։

Վիէննա. Ա. Շ. Առանձին պայմաններ չունենք։

Ժրնեւ. Ս.. Գ. Ուրախ ենք ուսանողական միութեան համար։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր և Տարազի 96 և 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Тифлисъ, Агбюръ կամ Таразъ.

Աղբիւր-Տարազի

գրասենեակում Թեալիայից եւ Ֆրանսիայից ստացել ենք մեծ բանակութեամբ 200 **տեսակից աւելի** *օյեօգրաֆիական* **շատ գեղեցիկ ՊԱՏԿԵՐՆԵՐ, հատը ճանապարհածախսով** 30 **կ. միչեւ** 3 **ր.**

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ մասին մի աշխատութեան համար համար հարկաւոր են հետեւեալ տեղեկութիւնները.

Ա. ամուսնութեան դէպքեր արտաքոյ կարգի պայմաններում. Բ. ընտանեկան նշանաւոր խռովութիւններ և դրանց արդիւնքը. Գ. ապահարզանի դէպքեր—դրանց շարժառիթները, հետեւանքները, վերջնական ելքը։ Հոգեւոր իշխանութեան բռնած դիրքը այդ գործում, նրա վճռի մոտիվները և այլ մանրամասնութիւններ այդ խնդիրների վերաբերմամբ։

Բացի այդ, մի շարք կանանց կարծիքներ ամուսնութեան մասին. Թէ ինչպէս էին մտածում ամուսնութեան մասին օրիորդ ժամանակում, ինչ տեսակ էին պատկերացնում ամուսնութիւնը, ինչ պարտականութիւն էին գտնում այն ժամանակ ամուսնութեան լծի վերաբերեալ, յետոյ ինչը ինչպէս գտան, որն է իրանց կարծիքով բախտաւոր և օրինաւոր ամուսնութիւնը, ինչ և ինչ էր պակասում իմանալ իրանց նախ քան ամուսնանալը և այն և այլն։ Մի խօսքով այս խնդրի մասին բազմակողմանի տեղեկութիւններ։

Հաւատացած ենք, որ ձեռնհաս անձինք և մեր յարգելի տիկինները չեն զլանայ այս գործում մեզ օգնել։

Հասցէն՝ Баку до востребованія Рубену Оганджанянъ.

Ռ. Յովհաննէսեան

Зуболѣчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Эконом. общества Ю. А ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.

Головинскій пр. д. Сергѣева № 7

10—6

ՈՒՆԱՉԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուվկա, Վորոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Պ. Ֆ. ՀԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ ՐՈՒԴՆԵՒԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Ֆ. ՖՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Ֆ. ՖՈՒՐԿՕ քիմիական և խոշոր բացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիլի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր.	Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1	25
ՍԱՍՈՒՆՑԻ ԿԵՍՐԻՑ—Ծերենցի Երկուցի IX դարու (սակաւաթիւ)	2	—
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն	1	—
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 60 կ. փոխ.	—	30
ՍԻՐԻՆԳ. Բնութեան երգեր և հանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	—	50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճենապակու վրայ պատկերը (սակաւաթիւ)	10	—
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ.	4	—
ԲԵՐԿՐԱՆՔ, խրոմօ-ակւարել, ՌԱՖԱՅԷԼԻ Մադօնաներ, հրեշտակներ, ՐՈՒԲԻՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ՁԷՔՍՊԻՐԻ խոմօ-ջուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն	—	60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծադիր փոտօ-գրաւիւր պատկերը	1	20
ՀԱՐԻՄԻ ԱՂՋԻԿԸ ոսկէ շրթաններում	—	50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1	30
ՁՄԵՌ	—	20
ԱՐՏԱՉԻՍ ԲԱԳաւորի մուտքի հոմ.	—	30

Дозв. ценз. Тифлисъ, 7 іюня 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.